ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 17.04.2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և Արարատ Սննդի Կոմբինատ ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Սարգիս Թարվերդյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 26.02.2019թ. կնքված № ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 51970572.5 (հիսունմեկ միլիոն ինն հարյուր յոթանասուն հազար հինգ հարյուր յոթանասուներկու ամբողջ հինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 20.12.2019թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1 և № 2 Հավելվածները բաղկացած են 1 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	Արարատ Սննդի Կոմբինատ ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք.Երևան, Վ.Դավթյան 13
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Էվոկաբանկ ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1660002787610100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 05523921
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Ս.ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

Հավելված N 1
№ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3-1 N 1 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Անվանումը	Չ/մ	Գինը (դրամով)	Ընդհանուր գումար	Անհրաժեշտ քանակը, 2019թ ըստ ամիսների						Քանակը
					ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	
1	ջեմեր (Ջեմ)	կգ	352.9	5222920	2,500	2,500	2,500	2,500	2,500	2,300	14,800
2	ջեմեր (Ջեմ)	կգ	333.78	4939944	2,500	2,500	2,500	2,500	2,500	2,300	14,800
3	ջեմեր (Ջեմ)	կգ	363.94	5393590.8	2,500	2,500	2,500	2,500	2,500	2,320	14,820
4	մուրաբա (Մուրաբա մորու)	կգ	772.79	8601152.7					5,500	5,630	11,130
5	մուրաբա (Մուրաբա բալի)	կգ	582.42	6496895.1					5,500	5,655	11,155
6	մուրաբա (Մուրաբա հոնի)	կգ	603.23	6713949.9					5,500	5,630	11,130
7	տոմատի կետչուպ (Կետչուպ)	կգ	561.62	14602120	4,400	4,400	4,400	4,400	4,400	4,000	26,000

Հավելված N 2
№ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3-1 N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկան	CPV-ի կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 20.12.2019թ*								
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	ջեմեր (Ջեմ)	15332290/1	882250	1764500	2646750	3529000	4411250	5222920	5222920	5222920	5222920
2	ջեմեր (Ջեմ)	15332290/2	834450	1668900	2503350	3337800	4172250	4939944	4939944	4939944	4939944
3	ջեմեր (Ջեմ)	15332290/3	909850	1819700	2729550	3639400	4549250	5393590.8	5393590.8	5393590.8	5393590.8
4	մուրաբա (Մուրաբա մորու)	15332230/1					4250345	8601152.7	8601152.7	8601152.7	8601152.7
5	մուրաբա (Մուրաբա բալի)	15332230/6					3203310	6496895.1	6496895.1	6496895.1	6496895.1
6	մուրաբա (Մուրաբա հոնի)	15332230/8					3317765	6713949.9	6713949.9	6713949.9	6713949.9
7	տոմատի կետչուպ (Կետչուպ)	15871230/1	2471128	4942256	7413384	9884512	12355640	14602120	14602120	14602120	14602120

** Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

Արարատ Սննդի Կոմբինատ ՍՊԸ
տնօրեն

Ս.ԹԱՐՎԵՐԴՅԱՆ